ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Պ-433-24.12.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հողի հարկի մասին» 1994 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-101 օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ֆիզիկական անձինք մինչեւ սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցման օրն ընդգրկող ամիսը ներառող ժամանակահատվածի համար հարկման օբյեկտ հանդիսացող տվյալ հողի մասով հարկի պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչեւ օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցումը բացառությամբ, երբ օտարումը կատարվում է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից:

Բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից անշարժ գույքի կադաստր վարող մարմինը հողի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցումն իրականացնում է հաշվառող մարմինների կողմից տրված՝ հողի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկանքը տրամադրելու հարկային տարվա այն ժամանակահատվածը, որի համար տվյալ հողի մասով կատարված են հողի հարկի վճարումները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծի փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 1. «Հողի հարկի մասին» 1994 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-101 օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ֆիզիկական անձինք մինչեւ սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցման օրն ընդգրկող ամիսը ներառող ժամանակահատվածի համար հարկման օբյեկտ հանդիսացող տվյալ հողի մասով հարկի պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչեւ օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցումը բացառությամբ, երբ օտարումը կատարվում է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից:

Բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից անշարժ գույքի կադաստր վարող մարմինը հողի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցումն իրականացնում է հաշվառող մարմինների կողմից տրված՝ հողի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկանքը տրամադրելու հարկային տարվա այն ժամանակահատվածը, որի համար տվյալ հողի մասով կատարված են հողի հարկի վճարումները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Փաստաթղթային կոդ՝ Պ-433-24.12.2019-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծով կարգավորել նաև անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից խնդրո առարկա դեպքում գույքի գրանցումը հողի հարկի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի առկայության պարագայում իրականացնելու հետ կապված հարաբերությունները: Առաջարկությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ հակառակ պարագայում կարող է ստացվել այնպես, որ ֆիզիկական անձինք գույքի օտարման պահին հողի հարկի պարտավորությունները կատարած չլինեն, իսկ անշարժ գույքի կադաստր	Ընդունվել է Նախագծում կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է

			վարող մարմինն իրականացնի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցում, ինչի արդյունքում նախագծով ներ-կայացված առաջարկությունը չծառայի իր առջև դրված նպատակին: Այս առումով հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի 4-րդ մասով նմանօրինակ կարգավորումներ նախատեսված են:		